

Ձորաշեն

Վարչական դեկավար՝ Սահակյան Գառնիկ

Յեռ 094-84-02-25

Մակերես՝ 25կմ²

Բնակչություն՝ 198

dzorashen.shirak@mta.gov.am

Համայնքի ներկայիս անվանումը – Ձորաշեն

Համայնքի հիմնադրման ժամանակաշրջանը –1830թ.

Որ համայնքներին է սահմանակից համայնքը –Սարապատ, Կաքավասար, Սարալանջ

Հեռավորությունը մայրաքաղաքից-180կմ

Հեռավորությունը մարզկենտրոնից -60կմ

Բնակչության կազմը –հայ

Կրթական հաստատություններ– դպրոց

Բնակչության հիմնական զբաղմունքը – անասնապահություն

Գյուղ Աշոցքի տարածաշրջանում, Աշոցք գյուղից 21-22կմ հարավ-արևելք, մարզկենտրոնից գտնվում է 39կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Կարաքիլիսա, Կարաքիլիսա Երրորդ, Ղարաքիլիսա Ձորի, Ղարաքիլիսա Նոր անվանումները: Ձորաշեն է վերանվանվել 1935 թ-ին: Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ:

Գյուղը տեղադրված է Չիչկան գետի ձախափնյակում՝ մեղմաթեք սարալանջի վրա՝ ծովի մակարդակից 1970մ բարձրության վրա: Կլիման ցուրտ լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Շրջակայքում կան աղբյուրներ, որոնք օգտագործվում են որպես խմելու ջուր: Գյուղի շրջակայքում պահպանվել են 1863թ.-ին վերակառուցված եկեղեցին, 13-րդ դարի Ս.Ստեփանոս կիսավեր վանքը և բերդի մնացորդներ: Գյուղի բնակչության նախնիների մի մասը գաղթել են Արևմտյան Հայաստանից: 1831 թ-ին գյուղն ունեցել է 323, 1897թ.-ին՝ 712, 1926 թ-ին՝ 764, 1959 թ-ին՝ 295, 1970 թ-ին՝ 336, 1979 թ-ին՝ 304 հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 198 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 46%, կանայք՝ 54%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 31%, աշխատունակներ՝ 53%, հետաշխատունակներ՝ 16%: Ունի 53 տնտեսություն: Ունի դպրոց, բուժկետ, կապի հանգույց: Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (211հա), խոտհարքերը (43հա): Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր, կազմելով համապատասխանաբար 234 և 1545 հեկտար: Անտառային հողերը զբաղեցնում են 138հա: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Ձորաշեն

Ինդեքս՝ 2805